ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2025թ. հուլիսի 7 -ին, N 169 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՎԱԶԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ն. Հովհաննիսյանի 2025 թվականի հուլիսի 2-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 7-ից հուլիսի 25-ը ներառյալ:
2. Նաիրա Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեվազի Ե.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ռուզաննա Վարդանյանի վրա:
3. Նաիրա Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հուլիսի 28-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/8/2025 12:44:13 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ